

**ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ  
ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ  
ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Հայ տպագիր բառարանագրութեան առաջին փուլը սկիզբ  
է առնում ԺԷ. դարից եւ տեւում է մինչեւ ԺՀ. դարի վերջը:  
Տպագիր առաջին բառարանը թարգմանական էր, եւ կազմել է  
Միլանի Ամբրոսեան դպրոցի հայագէտ՝ Ֆրանցիսկոյ Ռիվոլան  
(Dictionaryum Armeno-Latinum, Միլան, 1621), այնուհետեւ՝ լեհահայ  
եպիսկոպոս Աստուածատուր Ներսէսովիչը (Dictionaryum Latino-  
Armenium, Հռոմ, 1695):

Առաջին թարգմանական բառարաններին յաջորդում են  
գրաբարի բացատրական բառարանները: Առաջին բացատրական  
բառարանը Երեմիա Մեղրեցու «Բառգիրք Հայոց»ն է (Ալիկոռնայ,  
[Livorno] 1698), որին յաջորդում է Միխիթարեան միաբանու-  
թեան աբբահայր Միխիթար Մերաստացու կազմած երկհատոր  
բառարանը:

ԺՀ. դարի սկզբին Մերաստացու հիմնադրած միաբանու-  
թիւնը դարձաւ հայագիտութեան դարբնոցը, որտեղ ստեղծուե-  
ցին բառարանագրական, քերականական, մատենագիտական, կրօ-  
նական, պատմագիտական եւ բանասիրական բնոյթի ամենատար-  
բեր աշխատութիւններ:

Մատենագիտական աշխատանքների այս համատեքստում  
առանձնակի դեր ու կշիռ ունի բառարանագրութիւնը, որի ան-  
կիւնաքարը դրուեց Միխիթար Մերաստացու կազմած երկհատոր  
աշխատութեամբ («Բառգիրք հայկագեան լեզուի» Ա. 1749, Բ.  
1769): Մերաստացու այս աշխատանքն այլ կերպ կոչւում է «Հին  
հայկագեան բառարան» (ՀՀԲ), որը յետագյոււմ հիմք հանդիսա-  
ցաւ աբբայութեան մէկ այլ բառարանագրական երկհատոր յու-  
շարձանի՝ «նոր բառգիրք հայկագեան լեզուի» աշխատութեան  
ստեղծման համար:

**ՀՀԲի առաջին հատորը** (Վենետիկ, 1749) ներառում է շուրջ 30.000 բառայօդուած եւ բաղկացած է հինգ մասից՝

ա) Բան առ ընթերցողս յաղագս առաջիկայ առաջաբանութեանց:

բ) Բան առ ընթերցողս յաղագս առաջիկայ բառարանիս:

գ) Ցուցակ իրաց ինչ, զօր արժան է գիտել այնմ, որ ի կիր արկանէ զբառգիրքս զայս:

դ) Ցորդորակ առ բարտոք գործածութիւն բառգրքի:

է) Բառգիրք հայկագեան լեզուի համառօտ բացատրութեամբ:

**ՀՀԲի երկրորդ հատորը** լոյս տեսաւ Մխիթար Սեբաստացու մահից յետոյ՝ աշակերտների համատեղ ջանքերով՝ առաջին հատորի հրատարակութիւնից քսան տարի անց (Վենետիկ, 1769):

Այս հատորը բաղկացած է չորս մասից՝

1. **Մնացորդք գրաբառ բանից հայկագեան լեզուի համառօտ մեկնութեամբ:** (Պարունակում է շուրջ 5.000 բառայօդուած):

2.ա. «Բառարան յատուկ անունաց Աստուածաշունչ գրոց հին և նոր կտակարանաց»: (Պարունակում է 5.000 անուն):

2.բ. «Բառարան յատուկ անունաց, որ գտանին յայլ եւ այլ գիրս արտաքոյ Աստուածաշունչ գրոց»: (Պարունակում է 23.000 բառայօդուած):

3. «Բառգիրք ի գրաբառէ յաշխարհաբառն, ուր մեկնին բառք Հայկագեան լեզուի սոսկ աշխարհաբառ. կամ տաջկական բառիւք»: (Պարունակում է 35.000 բառ):

4. «Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառն նոյնանշան բառից յարադրութեամբ»: (Աշխարհաբարից գրաբարի են վերածուած շուրջ 45.000 գլխաբառեր, տրուած են դրանց հոմանիշները, բարբառային ձեւերը եւ թուրքերէն համարժէքները):

**Գլխաբառերի իմաստները** ճիշտ ըմբռնելու եւ դրանք ճիշտ կիրառելու համար հեղինակը բերում է դրանց բնագրային վկայութիւնները՝ յենուելով հիմնականում Աստուածաշունչ մատեանի փաստական նիւթի վրայ. Ընդ որում յաճախ մէջբերում է դրանց յունական եւ լատինական բնագիր հատուածները, որոնցից փոխադրուել են դրանք: Այս կարգի զուգագրական լուծումները հիմք են հանդիսանում լեզուների ցեղակցութեան, ինչպէս նաև բառային փոխառութիւնների հարցերը չօշափելու համար:

**Մխիթար Սեբաստացին** բառայօդուածները մատուցել է այբբենական կարգով։ գլխաբառերի քերականական կարգերը տրուած են յատուկ նշումներով։ նախ մատուցւում են թեքական բառերի նախընտրելի ձեւերը, ապա յետագայ դարերում ի յայտ եկած (հոլովական) զուգաձեւութիւնները (գոյականների դէպ-քում), ինչպէս՝ Լեզու-Լեզուի, աւ, աց, օֆ, այնուհետեւ՝ լեզույ, ով, ոց, ովք եւ այլն։

**ՀՀԲն** ո՞չ միայն բացատրական բառարան է, այն գրաբարի ուղղագրութեան կանոնարկման ձեռնարկ է նաեւ, այնտեղ բազմաթիւ բառերի ստուգաբանութիւնը տրուած է, նշուած է փոխառութիւնների աղբիւրը, հետեւաբար այն նաեւ, որոշ առումով, ստուգաբանական եւ փոխառութիւնների բառարան է, միևնու կողմից՝ այն նաեւ թարգմանական բառարան է, քանի որ գլխաբառերը տրուում են յունարէն, լատիններէն, թուրքերէն համարժէքներով։

**ՀՀԲն** նաեւ բառակազմական եւ ոճագիտական ձեռնարկ է. գլխաբառի բացատրութիւնից յետոյ յաճախ տրուում են դրանով կազմուած յարադրութիւնները, նշում են գլխաբառերի գործառական ոլորտները՝ ոճերը։

**ՀՀԲն** բացի գրաբար-աշխարհաբար բառարան լինելուց, նաեւ աշխարհաբար-գրաբար թարգմանական բառարան է. այս բաժնում աշխարհաբար գլխաբառերը մեկնաբանուում են գրաբարով եւ, ինչպէս նշեցինք, բերւում են դրանց հոմանիշները, բարբառային եւ թուրքերէն համարժէքները, թէեւ առանց բնագրային վկայութիւնների։ Բառարանի այս բաժինը յագեցած է գրաբար հոմանիշներով։

**ՀՀԲի** կարեւորագոյն արժանիքներից է յատուկ անունների բառարանը, որտեղ գետեղուած են ինչպէս Աստուածաշնչում գործածուած յատուկ անունները, այնպէս էլ այն յատկանունները, «որք գտանին յայլ եւ այլ գիրս արտաքոյ Աստուածաշունչ գրոց»։

Այս բառարանը հայ մշակոյթի պատմութեան մէջ առաջին անձնանունների բառարանն է, որի հիման վրայ յետագայում Հրաչեայ Աճառեանը կազմեց «Հայոց անձնանունների բառան» բազմահատոր աշխատութիւնը։

**Ցատուկ** անունների բառարանը դարձեալ կազմուած է այբբենական սկզբունքով։ գլխաբառին յաջորդում են քերականական նշումները, ապա՝ բառի բացատրութիւնը, այնուհետեւ

տրւում է բառագործածութեան տեղը: Բառայօդուածի բացատրութեան բաղկացուցիչ մասն է կազմում գլխաբառի ստուգաբանութիւնը:

Որոշակի արժէք են ներկայացնում նաեւ Աստուածաշունչ մատեանից դուրս այլ աղբիւրներում սփոռւած յատկանուններն ու նրանց մեկնաբանութիւնը. դրանք անձնանուններ կամ տեղանուններ են:

Եթէ ընդհանուր առմամբ բնութագրելու լինենք Սեբաստացու տիտանական աշխատանքը, ապա կարող ենք ասել, որ նրա ստեղծած (եւ աշակերտների ձեռքով ամբողջացած) բառարանագրական յուշարձանը ամենայն իրաւամբ կարելի է համարել բացարական, ուղղագրական, ստուգաբանական, հոմանիշների, յատկանունների բառարան, որ ընդհանուր առմամբ պարունակում է շուրջ 120.000 բառայօդուած:

Միմիթար Սեբաստացին եւ նրա նուիրեալ աշակերտները հայերէնը, նրա գիտական լեզուն եւ քերականութիւնը մաքրեցին օտարամուտ տարրերից, մասնաւորապէս՝ լատինաբանութիւնից եւ հայ մշակոյթին վերադարձրին մեսրոպեան շրջանի կատարեալ հայերէնը՝ նրան բնորոշ բառապաշարով, քերականօրէն կանոնակարգուած լեզուավիճակով, ոճական հազարութիւններով եւ արտայայտչական հնարաւորութիւններով:

Հայ բառարանագրական այս անկիւնաքարի վրայ բարձրացան գրաբարի մի շարք բառարաններ, որոնց գլուխգործոցը համարում է Միմիթարեան երեք վարդապետների երկասիրութիւնը՝ «Նոր բառգիրք հայկագեան լսզուի» երկհատոր բառարանը՝ տպագրուած Վենետիկում, Սուրբ Ղազարի տպարանում, 1836-1837: Այս բառարանը այլ կերպ անուանում են «Նոր հայկագեան բառարան» (ՆՀԲ): Այն գլուխ են բերել Միմիթարեան երեք երեւլի վարդապետները՝ Հ. Գ. Աւետիքեանը (1750-1827), Հ. Խ. Միւրմելեանը (1751-1827), Հ. Մ. Աւգերեանը (1762-1854):

Ցաւալի է, որ Հ. Գ. Աւետիքեանն ու Հ. Խ. Միւրմելեանը չեն էլ տեսնում իրենց կտորաբեայ աշխատանքի տպագրութիւնը. բառարանը տպագրում է նրանց մահից տասը տարի անց Հ. Մ. Աւգերեանի ջանքերով: Վերջինս ապրեց իր ընկերների մահուանից յետոյ եւս քաննօթ տարի եւ իր մահկանացուն կնքեց 92 տարեկանում: Նա միայնակ հասցրեց ամբողջացնել ՆՀԲն՝ գրելով բառարանի հիմնական մասը (Ըից մինչեւ Ֆ. տառերը), առաջարանը, աշխատանքը՝ նախապատրաստեց տպագրութեան, ստիպ-

ւած կրճատեց ձեռագիր բառարանը, մեծածաւալ 12 ձեռագիր հատորներից տպագրութեան յանձնեց երկու ստուար հատորներ:

**Որո՞նք են «Երկասիրութիւն երից վարդապետաց» աշխատութեան արժանիքները:**

Բառարանի նիւթը քաղուած է Ե.-ԺԲ. դարերի հայ ինքնուրոյն եւ թարգմանական մատենագրական երկերից. հեղինակներն օգտագործել են ՀՀԲն եւ Միջիթարեան միաբանութեան ձեռագրատանը եղած չուրջ 1000 ձեռագրեր:

**Որպէս կատարեալ բացատրական բառարան, ՆՀԲն գրաբարի բառային կազմը ներկայացնում է դրանց իրական վիճակով, քերականական բնութագրերով, իմաստային բացատրութիւններով, կայուն կապակցութիւններով (դարձուածքներով), զանազան աղբիւրներից քաղած պարզաբանող օրինակներով, դասական լեզուների զուգահեռ թարգմանութիւններով, փոխառութեան աղբիւրների նշումով եւ այլն:**

**ՆՀԲի հեղինակները ճիշտ են լուծել բառարանի առանցքային խնդիրները. այն է՝ բառայօդուածի եւ անդրլեզուի մատուցման սկզբունքները:**

**Բառայօդուածի բաղադրիչ է համարում գլխարառը. ՆՀԲում գլխաբառերը տրուած են այբբենական կարգով. գլխաբառը տեղեկութիւն է տալիս դասական ուղղագրութեան, արտասանութեան եւ շեշտի մասին. նրան կից տրում են բառային տարրեթեան եւ շեշտի մասին. նրան կից տրում են բառային տարրեր, ինչպէս՝ անձնահանութիւն կամ անձնահանութիւն, անձնաբակներ, ինչպէս՝ անձնահանութիւն կամ անձնահանութիւն կամ անձնուեր, երկիւղ/երկեւղ/երկեղ/երկիղ. Ցածախ տրում են գլխաբառերի հոմանիշները՝ գերեզմանատեղի/գերեզմանատուն, գերաշխարհ/գերաշխարհագոյն եւ այլն:**

**Բառիմաստի բացատրութիւնը անդրլեզուի բաղադրիչներից է: Բառիմաստի բացատրութիւնը նախատեսում է բացայայտել մենիմաստ եւ բազմիմաստ բառերի նշանակութիւնները եւ մեկնաբանել առանձին-առանձին, որ կանխորոշում է բառայօդուածի կառուցուածքը:**

**Բառարանագրութեան մէջ օգտագործում են բառիմաստի բացատրութեան տարրեր եղանակներ, ինչպէս՝ իմաստաբանական բացատրութեան տարրեր եղանակներ, համապատասխանական նկարագրական սահմանումը, հոմանիշներով սահմանումը, կամ նկարագրական սահմանումը, հոմանիշներով սահմանումը, կամ կարգով սահմանումը եւ այլն, որ լիարժեք կերպով օգտայլման կարգով սահմանումը եւ այլն, որ լիարժեք կերպով օգտայլման կարգով սահմանումը մեզանից չուրջ 200 տարի առաջ:**

### *Օրինակ.*

ա) Բառի խմաստարանական սահմանում (Նկարագրութիւն).

Գնացումն - գետօրէն գնացողութիւն ջրոյն. Անօգնական - որ չունի զոք իւր օգնական, պակասեալ յօգնականութենէ եւ այլն:

բ) Հոմանիշներով սահմանում.

Աղերս - աղաջանք, պաղատանք, մաղթանք, ողոք: Բարեվայելուչ - քաջավայելուչ, բարեյարմար, բարեձեւ, բարետեսիլ, գեղեցիկ, ազնիւ, պատուական:

գ) Նկարագրական եւ հոմանշային բացատրութիւն.

Անաշառ - որ ոչն աչառէ, անակնառու, որ չառնու ակն, անկաշառ, արդարակորով, անխտիր, անխնայ, հատու:

դ) Յղման կարգով սահմանում (յղումը հոմանշային տարբերակի մատնանշումն է, որ տրում է տե՛ս (Տ.) նշանով) Գէն. Տ. գէջ, Գէք. Տ. գէք, Գրապիւ. Տ. գրաքար եւ այլն:

Իւրաքանչիւր գլխարառ բնութագրուած է ֆերականական եւ ռեական առումներով: Նշուած են հոլովման եւ խոնարհման ձեւերը: Գլխարառից յետոյ տրուած են նրա քերականական կարգերը՝ խօսքիմասային արժէքը, հոլովման բնոյթը, հոլովիչը, հոլովման տարբերակները, զուգաձեւութիւնը, թիւը (գոյականի դէպքում) եւ բայական սեռը, երկրորդ հիմքի կազմութիւնը (բայի դէպքում):

Այսպէս, գոյականի համար որպէս գլխարառ տրուած է եղակի ուղղականը, անեղականների համար՝ յոգնակի ուղղականը, օրինակ. Ակն - ական, ակամք, նաեւ՝ ակին, ակունք: Դուստր - դստեր. երք, երաց կամ երց, գ.: Դաշտ - ի, աց, գ.: Զարդ - ուոց, ուք կամ զարդիւք, գ.:

Անեղականների դէպքում՝ կամք - մաց, մօք, գ.: Կարծիք - ծեաց, ծեօք, գ. եւ այլն:

Բայ խօսքի մասի համար հետեւեալ նշումները օրինակ անցեալի հիմքը (ա. դէմք), հրամայականի եղակին, սեռը՝ Արդարանամ - ացայ, ցի՛ր, չ.՝ Բերեմ - բերի, բե՛ր, ն.։ Գնամ - գնացի, գնա՛, գնացեալ, չ. (տրուած է նաեւ անցեալ դերբայը):

Գլխարառերի բացատրութիւնները, ինչպէս տեսանք, տրուած են տարբեր եղանակներով, որոնց մէջ գերակշռում է ի-

**մաստային նկարագրութիւնը. դրան յաջորդում է հոմանիշների թուարկումը:**

ՆՀԲԻ հեղինակները բառիմաստի բացատրութեան համար ընտրել են որոշակի սկզբունք. բառերի իմաստները ներկայացնել ըստ ժամանակագրութեան, այն է՝ բառերի իւրաքանչիւր իմաստի համար բնագրային օրինակներ վկայել ժամանակագրական կարգով այնպէս, ինչպէս այդ իմաստները հանդիպում են մատենագրութեան մէջ: Այս առումով ՆՀԲԻ դադարում է բացատրական բառարան լինելուց եւ ձեռք է բերում պատմական բառարանի արժէք: Այդ բառարանից կարելի է իմանալ գրաբարի բառային կազմի իմաստարժէքային փոփոխութիւնների յատակ ժամանակաշրջանը՝ հետեւելով բնագրային երկերի ժամանակաշրջանին:

Բառիմաստների համար, իրբեւ գրաբարեան վկայութիւններ, նախ բերւում են Աստուածաշնչի օրինակները, այնուհետեւ ըստ իմաստների՝ յետագայ դարերի բնագրային վկայութիւնները:

Այսպէս, հետեւելով բառերի իմաստային վկայութիւններին՝ կարող ենք ասել՝ այս կամ այն բառը Ե. Դարում եղե՞լ է, թէ ոչ, առաջինը ո՞ր հեղինակն է գործածել, նրա նոր իմաստները ո՞ր դարից են ձեւաւորուել եւ ո՞ր հեղինակի երկում են հանդիպում, այդ բառը փոխառութիւն է, թէ ոչ եւ այլն:

Ինչպէս նշեցինք, ՆՀԲԻ բառիմաստի բացատրութիւնների համար գործադրում է այլեւայլ եղանակներ, որոնք բառարանին վերագրում են հանրագիտարանային բնոյթ: Այսպէս, տիրապետելով բազմաթիւ օտար լեզուների, հեղինակները գլխաբառի համարժէքները վկայել են մի շարք լեզուներով, ինչպէս՝ յունարէն, լատիներէն, թուրքերէն, արաբերէն, պարսկերէն, եբրայերէն, ասորերէն եւ այլն: Այս հանգամանքը նրան վերագրում է քարգմանական բառարանի արժէք:

ՆՀԲԻ հեղինակները յաճախ ստուգաբանում են գլխաբառերը՝ բառարանին հաղորդելով ստուգաբանական բառարանի արժէք: ՆՀԲում ճիշտ կերպով ստուգաբանուած են յունարէնից, լատիներէնից, եբրայերէնից, պարսկերէնից եւ այլ լեզուներից փոխառուած հազարաւոր բառեր:

ՆՀԲԻ հեղինակները կատարել են բազմաթիւ բառերի զուգադրական համեմատութիւններ հայերէնի եւ այլ լեզուների միջեւ, ինչպէս՝ Մայր համեմատում է սանսկր. matar, լատ. mater, պրսկ. madar բառերի հետ, Դուռն՝ հուն. φήνω, պհ. տիռ, սանս.

տվառայ, լատ. Porta, janua, vestibulum, Դպիր բառը՝ հուն. Grammatēs, լատ. Scriba, պրսկ. տիպիյր, տիւպիր եւ այլն։ Այս հանդամանքը նրան վերագրում է զուգադրական բառարանի արժէք։

Բառարանում յատուկ նշումով առանձնացւում են փոխառութիւնները։ Նշում է փոխատու լեզուն, ինչպէս՝ կարողիկեայ - բառ յն. կարօլիկօ'ս։ Կարողիկէ - բառ. յն. կարօլիկի՛, լատ. կարօ՛լիկայ։ Ալֆարեսք - յն. ալֆալիդայ, երբ. եւ ար. ալեֆպեր, կամ էլիֆպէ։ Այս առումով էլ սոյն երկասիրութիւնը ձեռք է բերում փոխառութիւնների բառարանի արժէք։

Անշուշտ, սեղմ շրջանակներում անհնար է խօսել ՆՀԲի բառարանագրական բոլոր արժանիքների մասին, սակայն հպանցիկ այս վերլուծութիւնն էլ գաղափար է տալիս բառարանի լեզուաբանական կառուցուածքի վերաբերեալ, որն էլ պայմանաւորեց այն վիթխարի առաջընթացը, որ ապրեց հայ բառարանագրութիւնը Մխիթարեան միաբանութեան սահմաններից դուրս։

ՆՀԲն լոյս ընծայումից յետոյ դարձաւ այն միակ հաւաստի յուշարձանը, որին ապաւինում են հին հայերէնի հարցերով զբաղուող բոլոր մասնագէտներն անխտիր։ ՆՀԲի գիտական արժէքն այնքան բարձր էր, եւ այնքան հզօր էր նրա մոգական ուժը, որ ոչ չէր յանդէնում բառարանագրական փորձ անդամ կատարել։

Այնուամենայնիւ, ՆՀԲի հեղինակներից Հ. Մ. Աւգերեանը իւրայատուկ փորձ է կատարում։ Նա համառօտում է երից վարդապետաց երկասիրութիւնը, կազմում է առձեռն բառարան («Առանց բառարան Հայկազնեան լեզուի»), որտեղ կատարուած են զգալի փոփոխութիւններ ՆՀԲի համեմատութեամբ (բառայօդուածների քանակի եւ ընտրութեան առումներով)։ Հեղինակը գլխաբառերից յետոյ տալիս է քերականական նշումներ, որոնք ընութագրում են գլխաբառի քերականական յատկանիշները, այնուհետեւ բացատրում է գլխաբառի իմաստը կամ իմաստները, տալիս է դրանց հայատառ թուրքերէնով համարժէքները։ Այս բառարանում պակասում է ՆՀԲի բառարանագրական նուաճումը՝ բնագրային վկայութիւնները։ Բառարանը տպագրուում է Վենետիկում, 1846 թուականին։

Դրանից յետոյ Մխիթարեան միաբանութեան անդամ Հ. Գ. Ճելալեանը վերամշակում է 1846ի հրատարակութիւնը, աւելացնում է շուրջ 5.000 բառայօդուած եւ 1865ին վենետիկում

**Վերահրատարակում** է «Առանց հեղինակային վկայութեան»:

Առձեռն բառարանի մասին գաղափար կազմելու համար բերենք մէկական բառայօդուածների նմուշներ, որտեղ կարելի է տեսնել գործադրած բառարանագրական սկզբունքները: Այսպէս՝

Ազատ, ի, աց, ա. անկախ, տ. էզատ: - 2 ինքնիշխան: - 3 ազնուական, տ. քիպար: - 4 ազատած, տ. խէլաս: - 5 բաց, արձակ, տ. աչրգ: - 6 բարձր (ձայն). կ. պիւլենտ: - 7 հեռի ի. տ. պէրի, էմին: - 8 առանց արգելքի:

- Ազատ. մ. ազատութեամբ. տ. սէրպէսթ:

Ինչպէս տեսնում ենք բառայօդուածի կառուցուածքից, տրուած են գլխաբառի հոլովման հիմնական յատկանիշները՝ եղակի եւ յոգնակի սեռականի ձեւերը (ի, աց), որից երեւում է բառի արտաքին թեքման եւ խառը հոլովման պատկանելը, տրուած է գլխաբառի խօսքիմասային արժէքը, բազմիմաստ նշանակութիւններից իւրաքանչիւրը թարգմանուած է թուրքերէնով (հայատառ): Եթէ գլխաբառի բազմիմաստ նշանակութիւնները տարբերում են նաեւ ձեւաբանական արժէքով, ապա իբրեւ առանձին գլխաբառ է տրուում նաեւ այլ արժէքի կրողը (տե՛ս Ազատ-ի մակբայական նշանակութիւնը):

Հանեմ. հանի, հա՞ն, հանէ՞ք, նեալ. ն. - 1 դուրս հանել. տ. չըգարմագ: - 2 ձեռքէն խլել, առնուլ, վերցընել: - 3 բաժին հանել, մատուցանել, նուիրել. տ. սունմագ: - 4 վերածել, դարձընել: - 5 տարածել, հռչակել, բամբասել: - 6 տանիլ թաղել: - 7 հնարել, գտնալ: - 8 գուշակել, մարդարէանալ: - 9 զէնք քաշել:

Ինչպէս երեւում է բայական բառայօդուածի կառուցուածքից, տրուած են բայի անցեալ կատարեալի եզակի առաջին դէմքի վերջաւորութիւնը, եզակի եւ յոգնակի (ոչ միշտ) հրամայականը, անցեալ դերբայը, բայի սեռը, բառիմաստի բացատրութիւնը եւ թուրքերէն համարժէքները:

Եթէ տուեալ գլխաբառով կան կայուն կապակցութիւններ կամ յարադրութիւններ, ապա դրանք տրուում են նոր տողից, գծիկով:

Հանեմ բառայօդուածից յետոյ տրուած են հետեւեալ կապակցութիւնները՝

- Հանեմ ընդ սուր. թրէ անցընել:

- Ի վեր հանեմ. յայտնել, պատմել:

- Հանեմ զպատճառս առ ոֆ. բանը՝ յանցանքը ուրիշի վրայ ձգել:

- Հանեմ յայլ լեզու. թարգմանել:
- Թինքն հանեմ. յափշտակել...:

Յարադրութիւնների այսօրինակ մատուցումը միաժամանակ ցոյց է տալիս գլխաբառի դարձուածակազմիչ հնարաւորութիւնը, միւս կողմից՝ կարող է նպաստել գրաբարի դարձուածաբանական բառարան կազմելու աշխատանքներին:

Կիլիկիոյ հայոց կաթողիկոսարանը, նկատի ունենալով այս բառարանի գործնական մեծ արժեքը եւ կիրառական նպատակայարմարութիւնը, վերահրատարակեց այն սովորական գրքի ձեւաչափով (Անթիլիաս, 1988):

Ի. դարում հայ բառարանագրութիւնը զարգացման նոր շրջան թեւակոխեց. ասպարէզ եկան ստուգաբանական-արմատական, բացատրական, թարգմանական, մասնագիտական-տերմինաբանական, դարձուածաբանական եւ այլ կարգի աշխատանքներ, նոյնիսկ փորձեցին համալրել նշանաւոր ՆՀԲն. նկատի ունենք Նորայր Բիւզանդացու բառարանագրական յաւելումները. նորայաց բնագրերի հիման վրայ հեղինակը նոր բառայօդուածների նկարագրութիւններ տուեց. Այդ աշխատանքը 1990ին Ժնեւում հրատարակութեան պատրաստեց Մ. Մինասեանը. «Նոր բառգիրք Հայկագեան լեզուի, Սրբագրուած եւ նոյնացուած նորայր Բիւզանդացու ձեռքով»:

Ին'չ է արել Ն. Բիւզանդացին՝ ձեռքի տակ ունենալով նորայայտ բնագրեր.

1. Նոր հայեացքով քննել է ՆՀԲն եւ արել շուրջ 12.600 սրբագրութիւն:
2. Բառարանը հարստացրել է շուրջ 6.100 նոր գլխաբառերով, այդ թւում 2.200 կայուն կապակցութիւններ, որոնց համար բերուել են բնագրային վկայութիւններ:
3. Բառարանը հարստացրել է շուրջ 2.700 բնագրային վկայութիւններով, որոնք քաղուած են դասական եւ հետղասական հայերէնի ինքնուրոյն եւ թարգմանական գրականութիւնից:
4. Ճշգրտել է վեց հարիւրից աւելի գլխաբառ:
5. Աւելացրել է 460 բառի նոր իմաստներ:

6. Կրճատել է աւելի քան 2.700 գլխաբառ, որոնք հիմնականում օտարաբանութիւններ կամ բարբառային բառեր են:
7. Կատարել է ստուգաբանական ճշգրտումներ եւ լրցումներ՝ աւելի յաճախ տալով դրանց Փրանսերէն համարժէքները. մի հանգամանք, որ բացակայում է նշելու:

Հայ իրականութեան մէջ լոյս տեսած բոլոր տեսակի բառարաններն անվերապահօրէն սերում են հանրայայտ նշելից. դա վերաբերում է առաջին հերթին լեզուի բառային կազմի ընտրութեանը, բառայօդուածի կառուցուածքին, իմաստային բացատրութիւններին, բազմիմաստութեան դրսեւորումներին, դարձուածային տարբերակներին, օտար լեզուներով թարգմանութիւններին, բառարմատների ստուգաբանութեանը, բարբառային դրսեւորումներին, բառարանի անդրևելեզուին եւ այլն:

**Այսպէս,** 1926-1935 երեւանում լոյս տեսաւ Հրաչեայ Աճառեանի «Հայերէն արմատական բառարանը» (եօթ հատորով): Բառարանում հերթականութեամբ ամփոփուած են բոլոր հայերէն արմատները. իւրաքանչիւր բառի մասին խօսւում է հինգ բաժնով.

- 1) բառագիտութիւն,
- 2) ստուգաբանութիւն,
- 3) ստուգաբանութեան պատմութիւն,
- 4) գաւառական բառեր,
- 5) հայերէնից փոխառեալ բառեր:

Արմատական բառարանի հինգ բաժիններից երկուսը՝ բառագիտութիւնը՝ հիմնականում, ստուգաբանութիւնը՝ մասամբ, հիմնուած են նշել տուեալների վրայ:

Բառարանում տրուած են հայերէն 11.000 արմատների ծագումն ու ստուգաբանութեան պատմութիւնը: Հեղինակն ստուգաբանել է 5095 արմատ, որից 927ը բնիկ (Հնդեւրոպական) արմատներ են, 4015ը փոխառեալ, 155ը՝ բնաճայնական, մնացած 5901 արմատներից 2221ը անվաւեր արմատներ են, 3680ը՝ դեռեւս չստուգաբանուած:

<sup>1</sup> ԹՈՍՊԻՆՆԵԱՆ, Գ., Գրաբարի բառարանագրութիւնը, Ե. 2006, 72:

Բառագիտութիւնը բաժնում տրւում են՝ բառի արմատը, այդ արմատի հոլովական ու խոնարհման ձեւերը, իմաստներն ու նշանակութիւնը, վկայութիւնները՝ բառի գործածութեան մասին, նրանից կազմուած բառերը եւ վերջապէս տարբեր գրչութիւնները (գրչագրական տարբերակները): Վերջինիս նպատակն է պարզել հնչիւնական փոփոխութիւնների պատճառները եւ դրանով հանդերձ նպաստել հայերէնի բարբառների ուսումնասիրութեան գործին: Ըստ այդմ, բառագիտութիւնը բաժնում գլխաբառը մանրամասնօրէն բնութագրուում է բառագիտական, իմաստաբանական, բառակազմական եւ հնչիւնաբանական տեսանկիւններով:

Ստուգաբանութիւն բաժնում է արմատների ծագման մասին: Այստեղ զգալի է ՆՀԲի նպաստաւոր ազդեցութիւնը: Հեղինակը վկայում է արմատի ստուգաբանութեան այն տարբերակը, որ ինքը ճիշտ է համարում. սակայն քանի որ շատ ուսումնասիրողներ (Հ. Հիւրցման, Ա. Մեյէ) տուել են որոշակի արմատների ստուգաբանութիւնը, ապա հեղինակը չի բաւարարում միայն իր ստուգաբանութեամբ: Ծատ դէպքերում նա բերում եւ հաստատում է նաեւ ՆՀԲի ստուգաբանութիւնները: Ըստ ծագման արմատները տրւում են երկու խմբով՝ բնիկ եւ փոխառեալ: Բնիկ արմատները հնդեւրոպական նախալեզուից անցած արմատներն են եւ կազմում են հայերէնի հնագոյն արմատական բառաշերտը:

Ստուգաբանութեան պատմութեան բաժնում հեղինակն ի մի է բերում բոլոր այն բառագիտական դիտարկումները, որոնք կատարուել են տարբեր հետազոտողների կողմից. այս բաժնում նա ըստ պատշաճի վկայում է Մխիթարեան միաբանների արմատագիտական հայեացքները: Բառարանի այս բաժինը տալիս է հայերէն արմատների ստուգաբանութեան ամբողջական պատմութիւնը՝ Ե. Դարից մինչեւ արդի ժամանակները:

Գաւառական բառեր բաժնում հեղինակը վկայում է հայերէն արմատների հնարաւոր դրսեւորումները հայերէնի տարածքային տարբերակներում՝ բարբառներում: Այս բաժնի հետազոտական նիւթը բարբառագիտութեան քննութեան առարկայ կարող է դառնալ: Հեղինակը կազմել է շուրջ երեսուն բարբառների եւ ենթաբարբառների բառացանկեր եւ դրանք ներմուծել արմատականի այս բաժնում<sup>2</sup>: Նկատենք, որ այդ բարբառներից շատերն

<sup>2</sup> Ա.Ա.ՅԵՍԱՆ, Է., Հայ լեզուաբանութեան պատմութիւն, Բ., Երևան 1962, 186:

այժմ անհետացել են, եւ նրանց լեզուական նիւթի քննութիւնը (բառային կազմի առումով) կարեւոր նշանակութիւն ունի հայերէնի պատմական բարբառագիտութեան համար:

Հայերէնից փոխառեալ բառեր բաժնում տրւում են տեղեկութիւններ առ այն, թէ հայերէն այս կամ այն բառը ո՞ր լեզուի կողմից է փոխառութեան ենթարկուել. այսինքն հայերէն բառերը որպէս փոխառութիւններ ինչպիսի լեզուների են անցել:

Արմատական բառարանում որոշակի արժէք են ձեռք բերում թեքուող խօսքի մասերի քերականական ու ոճական բնութագրերը, որոնք կազմում են բառարանի անդրլեզուի բաղադրիչները: Աճառեանը, վկայելով նախորդ բառարանների տուեալները բառերի քերականական յատկանիշների վերաբերեալ, կատարել է որոշակի լրացումներ եւ ճշգրտումներ՝ ամբողջացնելով գլխաբառերի քերականական բնութագրերը:

1944-1945 Երեւանում լոյս է տեսնում Ստեփան Մալխասեանցի «Հայերէն բացատրական բառարան» քառահատոր աշխատութիւնը, որ ներկայացնում է հայոց լեզուի բառապաշարը, հինգերորդ դարի մատենագրութիւնից սկսած՝ մինչեւ մեր օրերի գրական լեզուն եւ բարբառները, հին եւ նոր ժամանակի փոխառեալ բառերը, արմատների ծագումը, նշանակութիւնների համապատասխան օրինակները, քերականական ցուցումները եւ այլն:

Վստահաբար կարող ենք նշել, որ, առանց հանրայացտ նշիքի ուղենշային տուեալների, այս կարգի մեծածաւալ բառարան գլուխ չէր բերուի. դա վերաբերում է առաջին հերթին գրաբարի բառային կազմի ընտրութեանը, նրանց իմաստների մեկնաբանութեանը եւ, որ կարեւոր է, բառերի նախնական կամ հին իմաստների բացայացտմանը: Մալխասեանցը, հիմք ընդունելով նշիքի հաւաստի վկայութիւնները, գրաբարեան հին իմաստները ներկայացնում է աստղանիշով:

Մալխասեանցի կազմած բառարանը ո՞չ միայն բացատրական բառարան է. այն ընդգրկում է հին հայերէնի, միջին հայերէնի, աշխարհաբարի եւ հայերէն բարբառների նիւթը, որոնք հանդիպում են տարաբնոյթ բառարաններում, նշիքում պուածին հերթին, երբ խօսքը վերաբերում է Ե.-ԺԲ. դարերի բառային կազմին: Այս չափումներով խնդրոյ առարկայ բառարանը կարող է համարուել պատմական բառարան, պնշուշտ, վերապահումով, քանի որ այնտեղ հաւաքուած չէ ամբողջ հայ մշակոյթի գրաւոր յուշարձանների բառամթերքը՝ բառիմաստային տարժամանակեայ

**Նկարագրութիւններով:** Այնուամենայնիւ, այս բառարանը հայ բառարանագրութեան մնայուն արժէքներից մէկն է. «հեղինակը, ըստ ամենայնի, կարողացել է հասնել իր նապատակին. թէ՛ պարունակած բառամբերքով, թէ՛ բառերի տարրեր նշանակութիւնների բացատրութեամբ՝ մանաւանդ այդ նշանակութիւնների փոփոխման ու զարգացման տրամարանական յաջորդականութիւնը պահպանելով, և թէ՛ բազմաթիւ ոնների պարունակութեամբ գիրքն արդիւնք է հեղինակի տքնաջան ու հմուտ գիտական ուսումնասիրութիւնների»<sup>3</sup>:

1969-1980 Երեւանում լոյս է տեսնում «Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան» քառահատոր աշխատութիւնը, որ հեղինակային մի ամբողջ համակազմի աշխատանքի արդիւնք է: Ընդհանուր առմամբ այս բառարանն ունի նորմատիւտեղեկատու բնոյթ, որ իրականցուել է՝

ա) Բառերի ընտրութեամբ:

Բառարանն ընդգրկում է ժամանակակից գրական արեւելահայ, ինչպէս նաև արեւմտահայ ճիւղերի բառային կազմն ու դարձուածանին. ԺԹ. դարի 70ական թուականներից ի վեր հայ գեղարուեստական, գիտական գրականութեան մէջ եւ մամուլում գործածուած բառերն ու նրանց իմաստները (շուրջ 100.000 բառ): Մալխասեանցի «Հայերէն բացատրական բառարանի» համեմատութեամբ այստեղ ներմուծուած են տասնեակ հազարաւոր բառեր ու իմաստներ, որոնք ինչ-ինչ պատճառներով կա'մ դուրս են մնացել այդ բառարանից, կա'մ ի յայտ են եկել նրա հրապարակումից յետոյ միայն:

բ) Բառերի իմաստների և նրանց երանգների նշումով ու բնութագրմամբ:

Բառարանում տրւում է բառիմաստների բացատրութիւնը. առաջնային տրւում են բառերի ուղղակի իմաստները, այնուհետեւ՝ փոխաբերական նշանակութիւնները: Բառիմաստները բացատրում են կա'մ հոմանշային տարբերակներով, կա'մ բառակապակցութիւններով, յաճախ օգտագործուում է տե՛ս յղումը: Հուսկ, գլխաբառի իմաստային բացատրութիւնից յետոյ տրւում են այդ բառով կազմուած կայուն կապակցութիւնները՝ համապատասխան իմաստներով: Նրանց բացատրութիւնը տրւում է մի անգամ՝ կապակցութեան առաջին բառի տակ, մնացած դէպքերում յղում է կատարուում:

<sup>3</sup> ԱՂԱՅԵՍԱՆ, Է., անդ, 72:

գ) Ոնարանական նշումներով, որոնք հաստատում են այս կամ այն բառի կամ նրա իմաստների գործածութեան ոլորտն ու սահմանները:

Այդ կարգի նշումները տրուում են կլոր փակագծերում բառի բոլոր նշանակութիւններից առաջ, եթէ նշումը վերաբերում է բոլոր նշանակութիւններին, իսկ երբ իմաստները տարրեր նշումներ են պահանջում, ապա սրանք դրուում են արարական թուանշաններով իրարից զատուած իւրաքանչիւր նշանակութիւնից առաջ: Նշումները բնորոշում են ժամանակակից գրական լեզուի բառային կազմի կիրառութեան այս կամ այն բնագաւառու, ինչպէս՝ բրբ.- բարբառային, խակց.- խօսակցական, գրք.- գրքային, հնց.- հնացած բառեր եւ այլն:

դ) Հեղինակային օրինակներով, որոնք ցոյց են տալիս, թէ տուեալ բառը ինչպէս եւ ինչպիսի գուգորդութիւններով է գործածում, ինչպէս նաև պարզաբանում են բառերի իմաստները:

Բառիմաստը պարզաբանելու եւ հիմնաւորելու համար, ըստ հնարաւորին, տրուում են բնագրային օրինակներ, որոնք քաղուած են ժամանակակից գրական հայերէնի երկու ճիւղերի գեղարուեստական գրականութիւնից, մամուլից եւ այլ կարգի նիւթերից:

Ե) Քերականական նշումներով եւ համապատասխան բացատրութիւններով:

Գլխաբառերի քերականական նշումներն ու նրանց բացատրութիւնները կազմում են բառարանի անդրլեզուի բաղադրիչները. բոլոր գլխաբառերի համար նշումը է նրանց խօսքիմասային արժէքը, գոյականների համար տրուում է եզակի սեռականի հոլովածեւը, նաև բարդ գոյականների յոգնակին, եթէ վերջին եզրը միավանկ է, բայցը մօտ նշում է սեռը, ապա՝ անցեալ կատարեալի առաջին կամ եղրորդ դէմքը: Որպէս գլխաբառեր բերւում են նաև բայցը կրաւորական ձեւերը, չեզոք սեռի իմաստը բացատրուում է, պատճառական բայցը տրուում են ընդհանուր կարգով, դերանունների մօտ նշում են այն հոլովածեւերը, որոնք քերականական իմաստներն արտայայտում են տարահիմք կազմութեամբ եւ այլն<sup>4</sup>:

<sup>4</sup> Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան, Ա., Երեւան 1969, 7-8:

Այս բառարանն առայժմ հայ իրականութեան մէջ միակ ամբողջական բառարանն է, որ լեզուի ժամանակակից բառի-մաստները ներկայացնում է բնագրային համապատասխան վկայութիւններով:

Այդ նոյն ժամանակահատուածում՝ 1976 թուականին, լոյս է տեսնում Էդուարտ Աղայեանի «Արդի հայերէնի բացատրական բառարան» ստուարածաւալ աշխատանքը՝ երկու գրքով:

Բառարանի մէջ մտել են այն բառերը, որոնք թէկուզ մէկ անգամ գործածուել են աշխարհաբար գրականութեան մէջ, այդ թւում՝

ա) Բարբառային բառերը, որոնք գեղարուեստական գրականութեան մէջ յաճախական գործածութիւն են ունեցել:

բ) Նոր եւ նորագոյն փոխառութիւնները, որոնք լեզուի մէջ ամրացել են որպէս բառապաշարի սեփականութիւնն, որոնք լեզուում ունեն իմաստային համարժէքները, ինչպէս նաեւ փոխարինուել են հայակազմ բառերով կամ ունեն գրքային գործածութեան առանձին դէպքեր:

գ) Հատուածական բարդութիւնները, որոնք չափազաց կենսունակ են եւ լեզուում լայն տարածում են գտել:

դ) Գրաբարեան Ն ձայնորդ ունեցող բառերի գգալի մասը, որ գործածուել է ԺԹ.Շ.Ի. դարերի գեղարուեստական լեզուում:

է) Բառերի ուղղագրական-ուղղախօսական տարբերակները, ինչպէս նաեւ բաղադրական հիմքերի տարբերակներով կազմութիւնները:

Բառարանում բոլոր գլխաբառերը տրուած են այբբենական սկզբունքով, ըստ ամենայնի տրուած են հայերէնի դարձուածքները, կայուն կապակցութիւնները, յարադիր բայերը եւ առանձնայատուկ արտայայտութիւնները։ Առաջին բառի համար նախ բերւում են ուղիղ (գլխաբառային) ձեւով դարձուածքները, ապա՝ թեք ձեւերը՝ յարացուցային հերթականութեամբ (անկախ այբբենական կարգից)։ Դարձուածքների համար հեղինակային վկայութիւններ չեն բերւում։

Որոշակի նշումներով գաղափար է տրուում բառի տարբերակային բնոյթի, գործածականութեան, գործառական ոլորտի մասին եւ այլն։ Նշումները բաժանուած են չորս կարգի՝ պատմական (հին. հնացած, նոր. նոր պատմական), գործառական (տերմինի պատկանելութիւն այս կամ այն գիտութեան, տնտեսու-

թեան բնագաւառին, զբաղմունքին. Հմմտ. բժշկ., տեխ., բար.), հասարակական (խսկց., բրբռ., ժղ., ժրգ., գոհկ.), նորմատրող (ախ., անհնձն., սկվ., հզվդ., օտրբ.) եւ այլն<sup>5</sup>:

Այս կարգի բառարանի առանցքային հարցերից է բառի-մաստի բացատրութիւնը. իբրև ընդհանուր կանոն, բառերի բոլոր նշանակութիւնները բացատրուած են, նոյնիմաստ բառերի բացատրութիւնը չկրկնելու համար գործածուած է «նոյնն է» յղումը, որ վերաբերում է միայն բառի նշանակութիւններին եւ չի ներառում նրա քերականական յատկանիշները:

Մալխասեանցի եւ Աղայեանի աշխատանքները թէեւ փոքրինչ հնացած են, այնուամենայնիւ արդի հայերէնի լիակատար բացատրական բառարաններ են, որոնք ամբողջական պատկերացում են տալիս հայերէնի բառային կազմի, նրա իմաստների, ուղղակի ու փոխաբերական նշանակութիւնների, բառակազմութեան, ուղղագրութեան, դարձուածքների եւ կայուն կապակցութիւնների վերաբերեալ:

Այս կարգի բառարանները թէեւ ներառում՝ են ժամանակակից հայերէնի բառային կազմն ու նրա իմաստները, այնուամենայնիւ, նրանց բառարանագրական մշակումները խարսխուում են որոշակի կայուն եւ ընդունուած սկզբունքների վրայ, որոնք մեզանում մշակել են Մխիթար աբբայ Սեբաստացին ու նրա երանելի աշակերտները:

Մխիթարեանների բառարանագրական ժառանգութիւնը վիթխարի ազգեցութիւն է՝ ունեցել հայ իրականութեան մէջ գրաբարի բառարաններ կազմելու բնագաւառում:

Հայաստանում 1998ին՝ հանրայացտ ՆՀԲից շուրջ 160 տարի անց, լոյս տեսաւ գրաբարի առաջին համեստ բառարանը, այն կոչում է «Գրաբարի տարածել բառերի բացատրական բառան». որ կազմել է տողերիս հեղինակը։ Բառարանը նուիրուած է գրաբարի բառային կազմի այն շերտին, որ հին հայերէնի մակարդակում ցուցաբերում է խօսքիմասային տարարժէքութիւն. բառական որոշակի միաւորներ լեզուի համաժամանակեայ կտրուածքում հանդէս են գալիս մէկից աւելի ձեւաբանական արժէքներով։

<sup>5</sup> ԱՂԱՅԵԱՆ, Է., Արդի հայերէթի բացատրական բառարան, Երևան 1976,  
13-15:

**Գրաբարի տարարժէք բառերի բացատրական բառարանի կազմումը պայմանաւորուած է տեսական ու գործնական անհրաժեշտութեամբ։ առաջին անգամ հաւաքւում եւ ի մի են բերւում գրաբարի նշանաւոր բառարաններում եւ գրաբարալեզու մատեաններում (ու դրանց համաբարբառներում) սփոռուած բառաքերականօրէն բազմիմաստ բառերը՝ երկարժէք, եռարժէք եւ քառարժէք համատեղումներով։**

**Թէեւ գրաբարի բառարանագրական յուշարձանները (ՆՀԲ եւ ԱԲ) տարբերակուած ձեւով նեկայացնում են այն բառերը, որոնք գրաբարում, յաճախ էլ նրա սահմաններից դուրս, բառաքերականական արժէքով երկատուած են, այնուամենայնիւ մեզ հետաքրքրող բառերն այդ աշխատութիւններում յաճախ վկայում են իրարամերժ բացատրութիւններով։**

**ա) ՆՀԲում վկայուած որոշ միարժէք բառեր ԱԲն դիտում է երկարժէք (ախորժական, ակնագործ, աղօթարար, հագարածին, այլ, հեթանոս եւ այլն):**

**բ) ՆՀԲում վկայուած որոշ երկարժէք բառեր ԱԲն համարում է միարժէք (աւագականոց, առանձնական, յանգիտական, խանձարրապատ, կամարակապ...):**

**գ) ԱԲն վկայում է բազմաթիւ տարարժէք բառեր, որոնք ՆՀԲում չկան (ածուենի, ակնկալ, անդրդուական, արեգնափայլ, արեւելակոյս, յառաջատեսիլ, քաջանձն...):**

**դ) ՆՀԲն բազմաթիւ բառերի խօսքիմասային տարարժէքութիւնը ցուցադրում է բնագրային մէկ նմուշի հիման վրայ (արգելանաւոր, բազկածիգ, կտակառու, տարածիգ):**

**է) Մասնակի տարակարծութիւններ կան միեւնոյն բառի երկարժէք կամ եռարժէք համատեղումների վերաբերեալ (ախորժակ, անառաջնորդ, գազանամարտ, քաջապէս):**

**զ) Թէ՛ ՆՀԲն եւ թէ՛ ԱԲն թուականներին վերագրում են գոյ./ած./մկր., իսկ դերանուններին՝ գոյ./ած. արժէքներ:**

**է) Կան մի շարք բառեր էլ, որոնց ՆՀԲն եւ ԱԲն վերագրում են խօսքիմասային մէկ արժէք, մինչդեռ համաբարբառների տուեալներով դրանք տարարժէք են (աթոռակալ, ակօսածիգ, աստեղագէտ, արիւնացայտ, հանգիստ, հուժկուագոյն...):**

<sup>6</sup> ԽԱԶԱՏՐԵԱՆ, Լ., Գրաբարի տարարժէք բառերի բացատրական բառան, Երևան 1998, 16-17:

**Տարակարծութիւնների լուծման բանալին տալիս է գրաբարի համաբարբառների եւ նորայայտ բնագրերի ընձեռած փաստական նիւթը. կասկածելի բոլոր բառերը մենք ստուգել ենք համաբարբառների բնագրային. վկայութիւններով եւ բնագրի շրջանակներում որոշել դրանց բառաքերականական արժէքների երկատուածութեան աստիճանը: Ըստ այդմ, հարթելով գրաբարի բառարաններում խնդրոյ առարկայի վերաբերեալ եղած տարակարծութիւնները՝ մեր ձեռքի տակ եղած բառացանկը համեմատել ենք ՆՀԲԻ լրամշակուած տարբերակի հետ, որ աշխատասիրել է Ն. Բիւզանդացին: Ըստ այդմ, մեր աշխատանքում որպէս առանձին գլխաբառեր ներկայացրել ենք՝**

**ա) բառակազմական տարբերակները (ծփալի-ծփալիր, միաձեռն-միաձեռանի),**

**բ) հնչիւնական տարբերակները (լրջամիտ-լրջմիտ, խրատատու-խրատու), եւ այլն:**

**Ի՞նչպէս են մատուցւում տարարժէք բառերը:**

1. **Եթէ տարարժէք բառերի իմաստային կառուցուածքում երկատուած արժէքները միմեանցից յատակ տարբերակուած չեն, դրանց համար տրւում է մէկ բացատրութիւն (ատենակալ - ած./գ., դատաւոր, խորհրդական, դպիր):**
2. **Եթէ տարարժէք բառի գ./ած. իմաստները բացատրում են մէկ նշանակութեամբ, ապա գոյականական իմաստի տարբերակումը յաճախ կատարուում է լրացուցիչ բառի օգնութեամբ (մանկալ- ած./գ., հերկող՝ վարող՝ մած բոնող (մարդ)):**
3. **Եթէ տուեալ բառի երկատուած արժէքներից մէկը բառական նշանակութեամբ բազմիմաստ է, ապա այդ իմաստները տրւում են առանձին:**
4. **Տարբեր բառերի երկատուած արժէքների համընկնելու դէպքում տրւում է տե՛ս յղումը.**

**ա) Եթէ իմաստներն ու արժէքները ամբողջովին են համընկնում (գաղտապէս, տե՛ս գաղտաբար),**

**բ) Եթէ իմաստներն ու արժէքները մասամբ են համընկնում (գաղանամարտիկ, տե՛ս գաղանամարտ (ած./գ.)) եւ այլն:**

**Այս աշխատանքը կազմելիս թէեւ մենք ձեռքի տակ ունեցել ենք գրաբարի մատենագիրների՝ արդէն հրատարակուած համաբարեառները, սակայն մեզ համար ուղենչային են եղել ՆՀԲի հեղինակների լեզուագիտական դրոյթները, բառարանագրական սկզբունքներն ու գրաբարեան բառերի իմաստարժէքային բնութագրումները։ Աշխատանքը մենք նուիրել ենք հայ բառարանագրութեան երախտաւոր մշակներ Հ. Գ. Աւետիքեանի, Հ. Խ. Սիւրմելեանի, Հ. Մ. Աւգերեանի պայծառ յիշատակին եւ նրանց քանքարաշատ վաստակի՝ «Նոր բառգիրք հայկագեան լեզուի» բառարանագրական յուշարձանի լոյսընծայման 160 ամեակին։**

**Շարունակելով մեր ուսումնասիրութիւններն այս մարզում՝ 2003ին մենք լոյս ընծայեցինք այս աշխատանքի լրամշակուած տարբերակը՝ «Գրաբարի բացատրական բառարան. ձեւարանօրէն տարարժէք բառեր», որտեղ արդէն ճեւաբանօրէն տարարժէք բառերի իւրաքանչիւր երկատուած արժէքի համար բերուած են բնագրային վկայութիւններ գրաբարեան մատենագրութիւնից՝ անշուշտ հիմքում ունենալով ՆՀԲի ուղենչային ցուցումները։**

**Ընդհանուր առմամբ այս բառարանուած պահպանուած են մեր նախորդ աշխատանքի բառարանագրական սկզբունքները, այստեղ, սակայն, ինչպէս նշեցինք, տարարժէք բառերի երկարժէք, եռարժէք եւ քառարժէք համատեղուամների համար բերուած են բնագրային օրինակներ, որոնք քաղուած են Ե.-ԺԲ. դարերի մատենագրութիւնից։ Որպէսզի չկրկնենք արդէն ծանօթ բառարանագրական սկզբունքները եւ միեւնոյն ժամանակ գաղափար կազմենք սոյն բառարանի վերաբերեալ, վկայենք մէկ-երկու բառայօդուած ամբողջութեամբ, որով պարզ կը դառնայ բառայօդուածի մատուցման եղանակը՝ նրա բոլոր բաղադրատարրերով։<sup>7</sup>**

**ԱԳԱՐԱԿ, Դ. Մշակելի հող՝ տարածութիւն. Եւ բաժանեաց ի նոսա զաւանս եւ զագարակս (Խոր., 279). 2. Հողային կալուածք՝ տիրոյթ. Ամենայն ագարակք շուրջ գքաղաքօքն, մինչեւ ցԲաաղեթ (Յեսու. ԺԹ.8). 3. Գիւղ, աւան. Ի գիւղսն եւ յագարակսն հանգիցեն (Ղուկ. Թ.12). ա. Ագարակին յատուկ, գիւղական. Գրեաց յամենայն ագարակ տեղիս (Ազաթ., 436).**

**ԱՀԱԳԻՆ, ա. Մարսափագրու, զարհուրելի. դժնի. Շրջեցաք ընդ ամենայն անապատն ընդ մեծ եւ ընդ ահագին (Բ. Օ-**

<sup>7</sup> ԽԱԶԱՏՐԵԱՆ, Լ., Գրաբարի բացատրական բառարան. ձեւարանօրէն տարարժէք բառեր, Երևան 2003, 10-15:

րէնք Ա.19): 2. Մեծ. Պատրաստեալ է նմա կործանումն ահագին (Յովլ ԺՀ.12): 3. Սաստիկ, խիստ. Ահագին զգուշութեամբ յուշ արարեալ (Ագաթ., 362): մ. Սաստկօրէն, սաստկապէս. Հրամանօք եւ սաստիւք ահագին կայր ի վերայ դիւացն (Պսկ. ՅՀ. Ա.1):

Նկատենք նաեւ, որ բառարանն ընդգրկում է այն տարարժէք բառերը, որոնց երկատուած իմաստներն ու արժէքները բաշխւում են խօսքիմասային համակարգի տարբեր միաւորների միջեւ, այլ կերպ ասած՝ դիտարկուած են միջխօսքիմասային տարարժէք բառերը:

2000 թուականին Երեւանում լոյս տեսաւ Ռ. Ղազարեանի «Գրաբարի բառարան» երկհատոր աշխատութիւնը: Սոյն բառարանը ոչ միայն ՆՀԲԻ, այլեւ «Առնեոն բառարանի» սկզբունքներով կազմուած ամբողջական բառարան է, որ մասամբ համալրել է գրաբարեան բառակազմը՝ ելնելով մատենագրական նոր աղբիւրների տուեալներից: Ուղղակիորէն կարելի է ասել, որ այս բառարանը «Առնեոն բառարանի» փոխադրութիւնն է աշխարհաբարի կամ նոր հայերէնի, որ իր տեսակի մէջ կատարեալ եւ շնորհակալ աշխատանք է: այն մշտապէս օգնելու է մասնագէտներին գրաբարեան բնագրեր թարգմանելու դժուարին եւ աշխատաբար գործում:

Այս բառարանում տարբերակուած եւ ի մի է բերուած գրաբարի բառապաշարը, որ ներառում է Ե.-ԺԱ. դարերի ինքնուրոյն եւ թարգմանական երկերում վկայուած բառերը, կայուն կապակցութիւններն ու դարձուածքները, որոնց մեծ մասը նոյնութեամբ կամ ձեւաիմաստային որոշ փոփոխութիւններով գործածական է հայոց լեզուի զարգացման յետագայ փուլերում:

Բառարանը կազմուած է այբբենական սկզբունքով. տարբեր խօսքի մասերի պատկանող բառերը տրւում են որպէս գլխաբառեր, որոնց բացատրութեան տարրերի ամբողջութիւնը կազմում է առանձին բառայօդուած: Բառարանում, իբրեւ գլխաբառեր, բերուում են՝

- ա) բայանունները (այրումն, ծագումն, գերումն, շրջումն, լուսումն...),
- բ) պատճառական բայերը (բազմեցուցանել, լաւացուցանել, միացուցանել...),
- գ) միադիմի բայերը (արժան է, պիտոյ է, պարտ, օրէն է...),

- դ) անցեալ եւ ենթակայական դերբայները, որոնք համատեղում են ածականի կամ գոյականի խօսքիմասային արժէքներ (բարձրեալ, կապեալ, անկեալ, հանգուցեալ...),
- է) դերանուանական եւ անկանոն հոլովման պատկանող բառերի թեք հոլովաձեւերը,
- զ) համանուն բառերը, որոնք, որպէս առանձին գլխաբառեր, համարակալուում են արաբական թուանշաններով,
- է) դարձուածաբանական միաւորները, որոնք տրուում են բառակապակցութեան առաջին բառեզրը կազմող կամ իմաստով կենտրոնական, հիմնական բառի տակ<sup>8</sup>:

Բառարանում քերականական անհրաժեշտ յղումներով բնութագրում են բոլոր բառերը տրուում են դրանց խօսքիմասային արժէքները, խոնարհման կամ հոլովման թեքական անհրաժեշտ ձեւերը. գոյականների դէպքում եզակի եւ յոգնակի սեռականի կամ գործիականի ձեւերը, զուգաձեւութիւնները, երբեմն՝ յոգնակի ուղղականի ձեւերը եւ այլն, ինչպէս՝ Անապատական, ի, աց, ա-գ.: Ասող, տեղ, տեղաց կամ տեղց, տեղօք կամ տեղբք: Անձն, ձին, ձինք, ձանց: Դաշն, շին, դաշինք, շանց եւ այլն:

Բայերը տրուում են անորոշ դերբայի ձեւով. տարբեր լծորդութիւնների բայերի համար տրուում է եզակի թուի առաջին դէմքի անցեալ կատարեալլ եւ բուն հրամայականը, ինչպէս՝ Տեսանել, տեսի, տե՛ս, Աղալ, ացի, աղա՛, Շարժել, եցի, շարժեա՛, Կիգուլ, կիզի, կէ՛զ, Ուսանել (իմ), ուսայ, ուսի՛ր եւ այլն:

Սրանց զուգահեռ յաճախ տրուում է անցեալ դերբայը, ինչպէս՝ Դառնալ, դարձայ, դա՛րձ կամ դարձի՛ր, դարձեալ, Կորինչել (իմ), ըեայ, ըի՛ր, ըուսեալ, Այոնուլ, տէայ, տի՛ր, տուցեալ, Գալ, եկի, ե՛կ, եկա՛յք, եկեալ եւ այլն:

Անկանոն հոլովան գոյականների եւ դերանունների համար սովորաբար տրուում են եզակի եւ յոգնակի թուի հոլովման բոլոր ձեւերը:

Հաշուի առնելով այն հանգամանքը, որ ՆՀԲում բոլոր բառերի իմաստների եւ նշանակութիւնների համար բերուում են համապատասխան բնագրային վկայութիւններ, այս բառարանը, ինչպէս նշում է Հեղինակը, զերծ է մնացել բնագրային օրինակներ վկայելուց:

<sup>8</sup> ՂԱԶԱՐԵԱՆ, Ռ., Գրաբարի բառարան, Ա., Երևան 2000, 5-6:

**Ղազարեանը,** հիմք ընդունելով **Մխիթարեան միաբանների հանրայայտ բառարանները,** կազմել է նաեւ «Գրաքարի հումանիշների բառարան» (Երեւան 2006) եւ «Գրաքարի դարձուածքների բառարան» (Երեւան 2012) աշխատանքները, վերջինս հրատարակուել է, ցաւօք, հեղինակի մահուանից յետոյ: 1987-1992 Հ. Աւետիսեանի հետ նա հրատարակել է «Միջին հայերէնի բառարան» երկհատոր աշխատանքը, որտեղ միջին հայերէնում գործառուող գրաքարեան բառերն ու նրանց իմաստները տրուած են ըստ ՆՀԲի հաւաստի վկայութիւնների:

2010ին լոյս տեսաւ **Լ. Յովհաննիսեանի կազմած «Գրաքարի բառարան».** Նոր հայկագեան բառարանում չվկայուած բառեր» աշխատանքը, որտեղ ընդգրկուած են այն բառերը, ոճերն ու դարձուածքները, որոնք հեղինակը քաղել է գրաքարեան մատենագրութիւնից: Հայկագեան բառարանի հրատարակութիւնից յետոյ ուսումնասիրողները (Ն. Բիւզանդացի, Հր. Աճառեան, Արիս. Վարդանեան եւ ուրիշներ) տարբեր առիթներով անդրադարձել են «նորայայտ» կամ «նոր» բառերի, որոնք այդ բառարանում գետեղուած չեն: Եւ ահա **Լ. Յովհաննիսեանը,** համեմատութեան եզր դարձնելով մխիթարեան վարդապետների գլուխգործոցը, հաւաքել եւ ըստ բնագրային վկայութիւնների բացատրել է նորայայտ բազմաթիւ բառեր, որոնց բնագրերը, ամենայն հաւանականութեամբ, յայտնի չեն եղել ՆՀԲի հեղինակներին: Սոյն բառարանը իւրովի համարում է ՆՀԲի բառացանկն ու բառայօդուածների բացատրութիւնները:

**Հեղինակը գլխաբառերը դասաւորել է այբբենական կարգով՝ նշելով խօսքիմասային արժէքները, որոշ բառերի դէպքում՝ նշւում է նաեւ փոխառութեան աղբիւրը՝ համապատասխան համառօտագրութեամբ, ինչպէս՝ կալամոն, գ. (յուն.), կադեսիմ, գ. (եբր.), Խորակ, գ. (միջ. պրսկ.), Լարարոն, գ. (լատ.), Թարուտ, գ. (պլակ.) եւ այլն:**

Որոշ դէպքերում տրուում է բառագործածութեան ոլորտը, ինչպէս՝ Խուզակի, գ. (կիլ.), Խեցգետնակեղ, գ. (բժշկ.), Լուսնահարութիւն, գ. (բժշկ.), Բազմոյք, գ. (աստղաշխ.). Եւ այն:

**Բայերը տրուում են անորոշ դերբայաձեւով՝ նշելով բայասեռը, ինչպէս՝ Խոնդել, չբ., Խաժարանել, չբ., Ըստգելու, նբ. Թաղանթել, նբ. եւ այլն: -ի խոնարհման բայերի համար փակագծերում նշւում է սահմանական եղանակի ներկայ ժամանակի եղակի թուի առաջին դէմքի վերջաւորութիւնը, ինչպէս՝ Արատել (իմ), Թարատել (իմ) եւ այլն:**

**Բառացանկում ընդգրկուած են նաեւ որոշ բայանուններ, պատճառական բայեր, դերբայներ, որոնք գործածում են ածականաբար կամ գոյականաբար:**

**Հեղինակը յատուկ ուշադրութիւն է դարձրել այն գլխաբառերին, որոնք համատեղում են մէկից աւելի խօսքիմասային արժէքներ։ այդպիսի բառերը տրուած են խօսքիմասային երկարժէք համատեղումների համապատասխան նշումներով, ինչպէս՝ Խեղդարկեալ, ա.գ., Խայտամահ, ա.գ., Թաթարերէն, ա.գ., Խաչակերպեալ, ա.մ., Թաղանքարդ, ա.մ. եւ այլն։ Հանդիպում են բառեր, որոնց իմաստը բնագրի շրջանակներում անդամ մնում է անստոյգ, դրանք տրուում են համապատասխան նշումով, հմմտ. Իրանալիր (իմաստը յստակ չէ):**

**Յովհաննիսեանի ուսումնասիրած բնագրերում հանդիպում են բառիմաստներ, որոնք արձանագրուած չեն ՆՇԲում։ այդպիսի բառերը բառարանում տրուում են աստղանիշով, ինչպէս՝ \*Անդաստան, \*Անքագաւոր, \*Անխոր, \*Բնարանական, \*Բոր, \*Եռետիկոս, \*Թարգմանել, \*Մակածական, \*Շրջել եւ այլն։**

**Այսպիսի աշխատատար ուսումնասիրութիւն կատարելով հանդերձ՝ հեղինակը դեռևս համոզուած չէ, որ բառարանում տեղ են գտել գրաբար մատենագրութեան մէջ աւանդուած, բայց ՆՇԲում չարձանագրուած բոլոր բառերը. «նման կարգի փոքրիշատէ լիակատար բառարան կազմելու համար անհրաժեշտ է գրաբար իմբնուրոյն եւ յատկապէս թարգմանական գրականուրեան համարաբառների կամ բառացանկի համակարգչային շտեմարանի գոյութիւն», - եզրակացնում է նաև։**

**Ինչպէս տեսնում ենք, մեզանում գրաբարի բառարանագրութիւնը զգալի վերելք է ապրել. մէկ անգամ եւս շեշտում ենք՝ դրան նպաստել են Մխիթարեան հայրերի ստեղծած հիմնարար աշխատանքները։**

**2013ին դարձեալ մեր հեղինակութեամբ լոյս տեսաւ «Գրաբարի ուսումնական բառարան» աշխատանքը, որ ներկայացնում է Ե.-ԺԲ. դարերի հայ մատենագրութեան մէջ ընդգրկուած գրաբարի բառային կազմն ընտրութեան որոշակի սկզբունքով։ Մենք ընդգրկել ենք մատենագրական այն յուշարձանների նիւթը, որ**

<sup>9</sup> ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Լ., Գրաբարի բառարան. Նոր հայկագեան բառարանում չվկայուած բառեր, Երևան 2010, 4:

<sup>10</sup> Անդ, 5:

նախատեսուած է համալսարաններում գրաբար ուսումնասիրող ուսանողների համար, որոնք առնչւում են նաեւ գրաբար բնագրեր թարգմանելու խնդիրներին:

**Բառարանում որպէս առանձին գլխաբառեր տրւում են՝**

ա) Յենակետային բառերը, որպէս սերող հիմքեր, եւ նրանցից ձեւաւորուած բարդութիւններն ու ածանցական կազմութիւնները, ինչպէս՝ Քաջ, Քաջաբար, Քաջագոյն, Քաջանուն, Քաջանորհ, Քաջասլաց, Քաջասլացիկ, Քաջընթաց եւ այլն:

բ) Բառակազմական տարրերակները՝ Աղօթկեար - Աղօթկեր, Ցաւէժ - Ցաւէտ, Վանատու - Վանատուր, Վայրկեան - Վայրկենի, Նախկի - Նախկին:

գ) Միեւնոյն բառի համադրական եւ վերլուծական տարրերակները՝ ինչպէս՝

**Մահու չափ - Մահուչափ: Ակն ածել - Ակնածել: Ակն ունել - Ակնունել եւ այլն:**

դ) ՀՅՀիւնական տարրերակները. Աղօթկեար - Աղօթկեր, Ցաւէժ - Ցաւէրժ, Ցելուզակ - Ցաղուզակ, Տաղանդ - Տաղանտ, Տոմար - Տօմար եւ այլն:

է) Բայանունները. Յօշումն, Յանգումն, Տարափումն, Փեռեկումն, Ամբարձումն, Անթաղումն եւ այլն:

զ) Կայուն կապակցութիւններն ու դարձուածքները. սրանք մատուցւում են բառակապակցութեան առաջին բառեզրի կամ կապակցութեան հիմնական (իմաստակիր) բաղադրիչների տակ. Հմմտ. - Նետաճիգ գլխաբառի բացատրութեանը յաջորդում է՝ Նետաճիգ առնել կամ լինել, Նետ ճգել՝ արճակել, Նետահարել, խոցել:

**Կարեւորուում են նիւթական խօսքի մասերի բնութագրերը:**

ա) Հոլովուող գոյականների դէպքում տրւում են եզակի եւ յոգնակի սեռականի ձեւերը, ինչպէս՝ նետող, ի, աց: Ներգոյ, ի, ից: Գրօշակ, ի, աց: Գօտի, ւոյ, եաց:

բ) Յաճախ տրւում է միայն եզակի սեռականի ձեւը, անեղական բառերի դէպքում յոգնակի սեռականը (նաեւ յոգնակի գործիականը), ինչպէս՝ Ցուցումն, ման: Հարցումն, ցման: Բարսմունք, մանց: Փառք, աց: Գնացք: ցից, ցիք:

գ) Հստ անհրաժեշտութեան գլխաբառի եզակի եւ յոգնակի սեռականի ձեւերի հետ տրւում է նաեւ յոգնակի ուղղականի ձե-

ւը, ինչպէս՝ Դաշն, ին, անց, ինք: Ուսումն, ման, մանց, մումք եւ այլն:

դ) Հոլովական գուգաձեւութիւն ունեցող բառերը տրւում են սեռականում հանդիպող բոլոր հոլովիչներով, ինչպէս՝ Փորուած, ոյ կամ ի: Օքեւան, ի, աց կամ ից: Յօրինուած, ոյ, ոց կամ ի, աց: Բիւր, բիւրու, ուց կամ րի, բեւ կամ ոյ, ոց եւ այլն:

է) Բոլոր բայերի համար տրւում են անց. կատ. եզ. Իին դէմքի խոնարհման վերջաւորութիւնները՝ բայի խոնարհման տիպը ցոյց տալու համար, ինչպէս՝ Ներկել, եցի: Ներհոսել (իմ), եցայ: Հանդիսանալ, ացայ: Այտնուլ, եայ եւ այլն:

զ) Եթէ չէզոք սեռի բայերն ունենում են նաեւ ներգործածեւ խոնարհում, ապա տրւում են համապատասխան խոնարհումների վերջաւորութիւնները, ինչպէս՝ Ցամառել, եցի եւ եցայ, չ: Հակամիտել, եցի եւ եցայ, չ, ն: Չայնակցել, եցայ եւ եցի, չ, ն. Եւ այլն:

է) Յաճախ բայի անց. կատ. հետ նշւում են նաեւ բուն հրամայականի ձեւերը, ինչպէս՝ Տեսանել, տեսի, տե՛ս: Բեկանել, բեկի, բե՛կ եւ այլն:

ը) Գլխաբառի հիմնական յատկանիշներից յետոյ նշւում է նաեւ բայի սեռը՝ ն. (ներգործական), չ. (չէզոք), հ. (հասարակ) եւ այլն:

Բնախօսել, եցի, ն. չ: Բնաւորել (իմ), եցայ, չ: Մերկանալ, ացայ, ացի՛ր, ն:, չ, հ:.

թ) Եթէ ներգործական սեռի բայը հանդէս է գալիս նաեւ կրաւորական կամ չէզոք սեռերի իմաստներով, ապա տրւում է կրաւորածեւ խոնարհման վերջաւորութիւնը՝ կ. չ. յղումով, ինչպէս՝

Հատանել, հատի, հա՛տ, ն: հատայ, հատիր, կ. չ:

Բարիմաստի բացատրութիւնը բառարանի կենտրոնական մասերից մէկն է, որ նախատեսում է բացայատել մենիմաստ եւ բազմիմաստ բառերի նշանակութիւնները եւ դրանք մեկնաբանել առանձին-առանձին:

Մենք կիրառել ենք ժամանակակից բառարանագրութեան մէջ գործածուող բառիմաստի բացատրութեան հետեւեալ եղանակները՝ իմաստաբանական կամ նկարագրական սահմանումը, հոմանշային սահմանումը, բառակազմական սահմանումը, յղման կարգով սահմանումը եւ այլն:

**Բառարանում յատուկ նշումով՝ տրւում են փոխառութիւնների աղբիւրները, որոնք մեծապէս նպաստում են սովորողների բառագիտական-ստուգաբանական գիտելիքների խորացմանն ու դրանց ամրապնդմանը։ Այսպէս՝**

**ա) Եթէ տուեալ գլխաբառը փոխառութիւն է, ապա գլխաբառից անմիջապէս յետոյ փակագծերում (համառօտագրութեամբ) նշում է փոխառութեան աղբիւրը, ինչպէս՝ Տաշտ (պիլ.), Վահան (իրան.), Տաճար (պրսկ.), Փիլոն (յուն.), Քահանայ (ասոր.), Գագարն (աֆֆադ.) եւ այլն։**

**բ) Որոշ բառերի դէպքում տրւում է միջնորդաւորուած փոխառութեան ուղին՝ նշելով թէ՛ փոխատու լեզուն, թէ՛ փոխառեալ լեզուն, որի միջնորդութեամբ տուեալ բառն անցել է հայրէնին, ինչպէս՝**

Արքայ (ասոր., յուն.-ից), ի, ից, գ.։ Վանահայր. կրօնաւոր, վանական։

**Մենք ցանկանում ենք մեր խօսքն աւարտել մեր իսկ բառարանի առաջարանից հետեւեալ մէջբերումով։ «Հնարաւոր չէ ձեռնարկել գրաբարի որեւէ կարգի բառարան՝ առանց համեմատական խարիսխ նետելու դարակազմիկ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» հիմնարար աշխատութեանը։ Մինիթարեան երախտաւոր այրերի կազմած բառարանագրական յուշարձանն ընդգրկում է գրաբարի բառային կազմի ողջ հարստութիւնը՝ բառիմաստների ու նրանց նրգերանգների բացատրութիւններով, բնագրային վկայութիւններով, ժերականական բնուրագներով, դարձուածային միաւորներով, փոխառութիւնների աղբիւրներով, մի շարք լեզուների գուգադրական բարգանութիւններով։ Մեզ համար գրաբարի բառային կազմի եւ բառիմաստների նշգրտման կարեւոր աղբիւր է հանդիսացել ոչ պակաս նշանաւոր «Առձեռն բառարանը», որ շուրջ հինգ հազար բառով ու արտայայտութիւններով համալրուել է նշթի համեմատութեամբ» (էջ 3-4)։**

**Անշուշտ, անուրանալի է Մխիթարեան այրերի բառարանագրական ժառանգութեան վիթխարի դերը Հայագիտութեան զարգացման այլ ասպարէզներում եւս։ Նկատի ունենք գրաբարի դասագրքերը, հայերէնի պատմութեանը նույրուած ուսումնասիրութիւնները, լեզուի տարբեր գոյավիճակների համաժամանակեայ եւ տարժամանակեայ ուսումնասիրութիւնները, տարբեր կարգի ատենախօսութիւնների ստեղծումը եւ այլն։**

**ՄԵՆՔ ՀԱՄՊԳՈՒԱԾ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԱՍԵԼ, ՈՐ Հ. ԳԱԲՐԻԵԼ Աւետիքեանի, Հ. Խաչատրուր Միւրմելեանի եւ Հ. Միքայէլ Աւգերեանի քանքարաշատ վաստակը ոչ միայն հայ բառարանգրութեան, այլեւ առհասարակ հայ գրքի տպագրութեան ամեհի յուշարձան է, որի վերաբերեալ կարելի է տարածել նաեւ Հոմերոսի վիպերգութեանը պատշաճող որակումը՝ յուշարձան, որ պահպանում է անհասանելի տիպարի ու չգերազանցուած նորմայի նշանակութիւն:**

ԼԱՂԻԿ ԽԱԶԱՏՐԵԱՆ

### **Summary**

## **THE LEXICOGRAPHICAL HERITAGE OF THE MKHITARIST CONGREGATION WITHIN THE CONTEXT OF THE DEVELOPMENT OF ARMENIAN STUDIES**

**LALIK KHACHATRYAN**

At the beginning of the 18th century, the Mkhitarist Congregation became a cradle of Armenian Studies where various monumental works of different characters sprang up, such as lexicographical, grammatical, bibliographical, religious, historical, and philological works. The masterpiece of the dictionaries is considered to be the work of three Mkhitarist monks – Gabriel Avedikian, Khachatur Surmelian, and Mkrtich Avgerian. The *New Dictionary of the Armenian Language*, published in two large volumes at the San Lazzaro printing house in Venice in 1836-37 is also known as the *New Haykazian Dictionary* (NHD).

All sorts of dictionaries published in Armenian (Hrachia Acharian, Stepanos Malkhasian, Eduard Aghayan, Lalik Khachatryan, Ruben Ghazaryan, Lavrenti Hovhannisan) can without question be considered to have descended from the renowned NHD, whether in terms of choice of word stock, the structure of entries, semantic explanations, manifestations of polysemy, idiomatic versions, translations from foreign languages, etymologies of root morphemes, manifestations in dialects, the metalanguage of the dictionary, etc.

We fully confirm that G. Avedikian's, K. Surmelian's, and M. Avgerian's richly-endowed work is a monument of not only Armenian lexicography, but also Armenian book printing in general. Finally, the following description suitable for Homer's work, is also applicable in this case: it is a literary monument which is defined by being both unreachable and unexcelled.